ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՀԵՆՐԻԿ ՄԻՐԶՈՅԱՆԻ՝ ՎՐԱՍՏԱՆ (Ք. ԹԲԻԼԻՍԻ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Հենրիկ Միրզոյան:

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության բարձր տեխնոլոգիաների վարչության պետ:

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Վրաստան (ք. Թբիլիսի), 2023թ. հունիսի 28-30-ը:

4. Հրավիրող կողմը.

«500 Global» վենչուրային ֆոնդի վրաստանյան մասնաճյուղ:

5. Գործուղման նպատակը.

2023թ. հունիսի 29-ին ք. Թբիլիսիում կայացած «500 Global's Georgia Accelerator Demo Day» միջոցառմանը մասնակցելու նպատակով:

6. Քննարկված թեմաները.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության բարձր տեխնոլոգիաների վարչության պետ Հենրիկ Միրզոյանը ներկայացրել է Հայաստանում ստարտափ էկոհամակարգի զարգացման նպատակով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից իրականացվող ծրագրերը, ստարտափ նախաձեռնությունների խթանման նպատակով առկա դրամաշնորհային ծրագրերը, օրենսդրական բարեփոխումները, որոնք միտված են հեշտացնել Հայաստանում ոլորտային արտադրանքի ձևավորումը: Միջոցառման ընթացքում կայացած հանդիպումների ընթացքում Հենրիկ Միրզոյանը մասնակցել է ստարտափների աքսելերացիոն ծրագրերի վերաբերյալ քննարկումներին, կատարել ոլորտային համագործակցության խթանման մոտեցումների, ծրագրերի ու հնարավորությունների ուսումնասիրություն, ծանոթացել մի շարք երկրների կողմից ստարտափ էկոհամակարգի զարգացմանն ուղղված մոտեցումներին:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Միջոցառման շրջանակներում Հենրիկ Միրզոյանը հանդիպել է «Arena Games», «Blimper», «DataMind», «Dealpad», «Fortu Wealth», «OneApp» և «Squares» ստարտափ ընկերությունների ներկայացուցիչների հետ: Հենրիկ Միրզոյանը ներկայացրել է ոլորտի զարգացմանն ուղղված պետության կողմից իրականացվող ռազմավարական ծրագրերը, քննարկվել են հայկական ոլորտային ընկերությունների հետ համագործակցության հնարավորությունները:

Հանդիպումներ են տեղի ունեցել նաև «Activat VS» վենչուրային ֆոնդի գործադիր տնօրեն Մերիժան Յեսսիմխանովի և «500 Global» վենչուրային ֆոնդի շուկայի ռազմավարության տնօրեն Նիկ Դեյվիսոնի հետ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում տեսազանգի միջոցով շարունակել քննարկումները հայկական ստարտափ ընկերությունների հետ համագործակցության հնարավորությունների ու աքսելերացիոն և ներդրումային ծրագրերի իրականացման վերաբերյալ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ շարունակելու քննարկումները համագործակցության ընդլայնմանն ուղղված ծրագրեր իրականացնելու վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Հենրիկ Միրզոյան

06.07.2023թ.